ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 010 594192
Էլ. փոստ hayrapetyan.gevorg@moj.am

N 04/10632
«16» 05 2019թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան, 0010, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 14.05.2019թ. ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանին ուղղված և Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը վերահասցեագրված Ձեր էլեկտրոնային հարցմանը՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից նշված պարտավորությունները սահմանված են «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ և պատասխանատու հանրային կառավարման միջոցով» ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի 12-րդ նախապայմանով, ըստ որի՝ նախատեսվում է իրականացնել Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինների կողմից անձնական տվյալների պաշտպանության ներքին ընթացակարգերի ընդունումը:

ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից արդեն մշակվել են համապատասխան ցուցումների նախագծերը, որոնք քննարկման փուլում են: Ընդ որում՝ չափանիշի պահանջը կատարելու համար ցուցումները նախատեսվում է ընդունել Կառավարության որոշման մակարդակով: Միաժամանակ հայտնում ենք, որ պետական մարմինների կողմից վերը նշված նախապայմանների իրականացման ժամկետը երկարաձգվել է մինչև սույն թվականի ավարտը: Ըստ այդմ, պատասխանելով Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ.

1. Պետական կառավարման մարմինների կողմից անձնական տվյալների պաշտպանության ներքին ընթացակարգերի ընդունման պարտավորության ժամկետը երկարաձգվել է մինչև 2019թ. ավարտը:

2. Պետական կառավարման մարմինների կողմից անձնական տվյալների պաշտպանության ներքին ընթացակարգերի հրապարակման նախապայմանի ժամկետը ևս երկարաձգվել է մինչև 2019թ. ավարտը և կախված է նախորդ նախապայմանի իրականացումից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ
ՋՈՒԼԻԵՏԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ